



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2012թ. առաջին եռամսյակում /վերլուծություն/

2012թ. առաջին եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 37934 գործարքներ, որոնց քանակը 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 31.4%-ով, իսկ 2011թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 8.8%-ով:

2012թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 10395 օտարման գործարքների 77.6%-ը կազմել են առուվաճառքները, 21.6%-ը՝ նվիրատվությունները և 0.8%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 38.8%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված

անշարժ գույքի 38.8%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2012թ. առաջին եռամսյակում, 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն նվազել է 20.3%-ով, իսկ 2011թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 2.9%-ով:

2012թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 67.0%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2012թ. առաջին եռամսյակում, 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 13.8%-ով, իսկ 2011թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 7.6%-ով:

2012թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	առաջին եռամսյակ 2011թ.	առաջին եռամսյակ 2012թ.	չորրորդ եռամսյակ 2011թ.
Կենտրոն	444500	400300	438200
Արաբկիր	352200	334100	339000
Քանաքեռ-Զեյթուն	272700	260300	263800
Նոր-Նորք	226200	225700	229800
Ավան	229400	234400	243400
Էրեբունի	235300	233800	231200
Շենգավիթ	235300	229500	232500
Դավթաշեն	259000	255000	255500
Աջափնյակ	221200	221200	228800
Մալաթիա-Սեբաստիա	220000	220100	222700
Նուբարաշեն	148700	140100	142500
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	258600	250400	257000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2012թ. առաջին եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել են 2.6%-ով:

2012թ. առաջին եռամսյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 978 բնակարաններ, որոնց քանակը, 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 12.8%-ով, իսկ 2011թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 3.1%-ով:

2012թ. առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		առաջին եռամսյակ 2011թ.	առաջին եռամսյակ 2012թ.	չորրորդ եռամսյակ 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	135500	108400	118300
	Ապարան	46500	48800	51900
	Թալին	57800	61500	65700
Արարատ	Արտաշատ	93000	90900	93900
	Մասիս	131700	106600	108900
	Վեդի	94200	96700	94800

	Արարատ	84300	71200	76100
Արմավիր	Վաղարշապատ	150800	148300	141400
	Արմավիր	124700	115400	114000
	Մեծամոր	84000	85300	80900
Գեղարքունիք	Սևան	90500	96400	91900
	Գավառ	48000	52700	54500
	Մարտունի	86800	103900	98200
	Վարդենիս	31800	32700	33700
	Գանձարակ	20800	21600	25000
Լոռի	Վանաձոր	89800	82800	84100
	Ստեփանավան	60400	76000	77100
	Սպիտակ	84500	100400	101100
	Ալավերդի	33900	49700	43000
	Տաշիր	37400	41900	48900
	Թումանյան	7300	11500	13000
	Շամլուղ	4200	8100	9400
	Ախթալա	15200	19600	22300
Կոտայք	Աբովյան	144200	148600	144000
	Նոր Զաճն	129500	127900	128600
	Բյուրեղավան	104300	106800	104600
	Եղվարդ	108700	108300	112000
	Հրազդան	61000	57200	59600
	Ծաղկաձոր	178700	295900	236900
	Չարենցավան	76400	82500	77700
Շիրակ	Գյումրի	112400	102500	102600
	Արթիկ	62500	63700	63800
	Մարալիկ	30200	35700	37500
Սյունիք	Գորիս	138300	115500	119100
	Կապան	101400	88300	93900
	Սիսիան	84500	78700	83100
	Մեղրի	62300	67300	72200
	Ագարակ	35200	39700	44100
	Քաջարան	61000	100100	82200
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	72600	81800	81200
	Եղեգնաձոր	109900	121200	117500
	Ջերմուկ	122400	92300	103700
Տավուշ	Դիլիջան	106100	97900	97000
	Իջևան	131500	110900	117400
	Բերդ	43000	49200	53100
	Նոյեմբերյան	35000	40100	42300
	Այրում	24500	24600	29200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2012թ. առաջին եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ, աճել են 0.4%-ով:

2012թ. առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1160 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 286, մարզերում միասին վերցրած՝ 874: 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն նվազել է 21.6%-ով, ընդ որում, Երևանում՝ 20.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 21.8%-ով: 2011թ. առաջին եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 19.3%-ով, ընդ որում Երևանում՝ 17.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 19.9%-ով:

2012թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	առաջին եռամսյակ 2011թ.	առաջին եռամսյակ 2012թ.	չորրորդ եռամսյակ 2011թ
Կենտրոն	469970	459200	461700
Արաբկիր	379300	366400	370200
Քանաքեռ-Զեյթուն	286200	274800	277000
Նորք-Մարաշ	277100	301350	303600
Ավան	242100	249100	253400
Էրեբունի	241500	219500	230000
Շենգավիթ	247800	239300	241900
Դավթաշեն	272100	257500	264200
Աջափնյակ	236800	236400	239000
Մալաթիա-Սեբաստիա	232500	219800	227900
Նուբարաշեն	150100	144700	145100
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	276000	269900	274000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2012թ. առաջին եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել են 1.5% :

2012թ. առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		առաջին եռամսյակ 2011թ.	առաջին եռամսյակ 2012թ.	չորրորդ եռամսյակ 2011թ
Արագածոտն	Աշտարակ	141800	130050	131200
	Ապարան	48400	52100	54700
	Թալին	58400	70000	69700
Արարատ	Արտաշատ	100300	100000	103000
	Մասիս	137000	112000	114000
	Վեդի	98200	99850	95900
	Արարատ	88800	88000	88800
Արմավիր	Վաղարշապատ	163600	145100	164000
	Արմավիր	131000	100000	116400
Գեղարքունիք	Սևան	96100	90900	94400
	Գավառ	50800	45500	50300
	Մարտունի	88900	90100	96900
	Վարդենիս	34200	34000	38400
	Ծամբարակ	23000	26000	28400
Լոռի	Վանաձոր	98900	95050	97300
	Ստեփանավան	63000	87000	79200
	Սպիտակ	86500	111300	108800

	Ալավերդի	36300	42150	40100
	Տաշիր	40800	51050	54100
	Թումանյան	10800	12500	13900
	Շամլուղ	7700	13200	11500
	Ախթալա	18300	29400	25000
Կոտայք	Արմավան	158500	143500	152500
	Նոր Զաճն	135800	128100	132400
	Բյուրեղավան	108700	120000	109100
	Եղվարդ	113700	115000	120500
	Հրազդան	65200	77000	66600
	Ծաղկաձոր	316700	303700	308300
	Չարենցավան	79200	74500	77300
Շիրակ	Գյումրի	121700	115800	118900
	Արթիկ	63300	60000	67700
	Մարալիկ	32400	48000	39800
Սյունիք	Գորիս	143300	126900	126900
	Կապան	106800	97800	100400
	Սիսիան	86200	87800	89100
	Մեղրի	64700	74500	76000
	Ագարակ	36000	46000	47500
	Դաստակերտ	10500	11600	10300
Վայոց Ձոր	Վայք	74800	82100	82700
	Եղեգնաձոր	112500	109850	118900
	Ջերմուկ	122900	118700	116800
Տավուշ	Դիլիջան	109700	103100	103900
	Իջևան	134700	119900	129500
	Բերդ	44700	57850	57800
	Նոյեմբերյան	36500	46000	46300
	Այրում	26100	34500	34300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել են 2.1 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2012թ. առաջին եռամսյակում հանրապետությունում օտարվել են 3409 միավոր /1933.74 հա/ հողեր, որից Երևանում՝ 216 միավոր /56.55 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1840 միավոր /1721.37 հա/, որից Երևանում՝ 12 միավոր /2.22 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 1203 միավոր /122.27 հա/, որից Երևանում՝ 129 միավոր /13.16 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 293 միավոր /20.56 հա/, որից Երևանում՝ 69 միավոր /8.26 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 45 միավոր /55.68 հա/, որից Երևանում՝ 6 միավոր /32.91 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 11 միավոր /1.49 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 16 միավոր /12.29 հա/,
- ջրային հողեր՝ 1 միավոր /0.09 հա/:

2012թ. առաջին եռամսյակում հանրապետությունում օտարված հողերից 2970 միավորի /1749.72 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 196 միավոր /53.58 հա/, նվիրատվության գործարքներ՝ 415 միավոր /178.61

հա/, որից Երևանում՝ 20 միավոր /2.97 հա/ և փոխանակության գործարքներ՝ 24 միավոր /5.41 հա/:

Հանրապետությունում 2012թ. առաջին եռամսյակում, 2011թ. առաջին եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 7.0%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 8.9%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 5.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 36.4%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 405.90 հա, որից 381.88 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Վաճառված հողերի քանակի 12.1% կամ 358 գործարքներ /201.24 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 19 գործարքներ /0.95 հա/, իսկ 87.5% կամ 2599 միավորը /1540.71 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 105 միավոր /101.92 հա/:

2012թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 13 գործարք /7.77 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2012թ. առաջին եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	19	0.95	0	0.00	11	1.41	6	32.91	94	11.19	63	7.11
Արագածոտն	11	9.08	12	1.89	1	0.24	6	0.57	161	245.53	0	0.00	60	8.65	11	1.45
Արարատ	20	15.18	2	0.20	6	0.92	6	0.32	243	128.58	5	5.44	131	11.82	10	0.36
Արմավիր	12	51.72	0	0.00	5	0.41	2	0.02	244	330.17	3	6.55	152	16.30	10	0.72
Գեղարքունիք	8	6.03	0	0.00	7	0.69	2	0.40	108	78.55	0	0.00	82	11.10	10	1.02
Լոռի	2	0.84	0	0.00	7	0.19	14	0.27	228	189.38	1	1.50	84	10.01	14	0.67
Կոտայք	24	25.32	1	0.11	58	5.30	32	1.01	245	142.17	10	6.36	200	16.04	28	2.14
Շիրակ	1	5.85	1	0.03	11	0.15	12	0.37	105	101.92	1	0.02	41	4.29	10	0.58
Սյունիք	2	7.00	0	0.00	3	2.17	3	0.23	43	116.96	1	0.05	56	3.94	5	0.37
Վայոց Ձոր	28	52.21	0	0.00	3	0.11	16	0.32	27	18.79	0	0.00	7	0.69	3	0.01
Տավուշ	6	10.41	0	0.00	9	0.44	4	0.08	40	18.51	2	0.60	16	1.23	6	0.18
Ընդամենը	114	183.64	16	2.23	129	11.57	97	3.59	1455	1371.97	29	53.43	923	95.26	170	14.61

Ստորև ներկայացվում է 2012թ. առաջին եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	19	0.95	0	0.00	0	0.00	19	0.95	0	0.00
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	30	11.78	11	9.08	12	1.89	1	0.24	6	0.57
Արարատ	1	0.0002	0	0.00	0	0.00	1	0.0002	33	16.62	20	15.18	2	0.20	6	0.92	5	0.32
Արմավիր	2	0.02	0	0.00	1	0.01	1	0.01	16	51.99	11	51.57	0	0.00	4	0.41	1	0.01
Գեղարքունիք	3	0.31	0	0.00	3	0.31	0	0.00	14	6.81	8	6.03	0	0.00	4	0.38	2	0.40
Լոռի	2	0.01	0	0.00	0	0.00	2	0.01	21	1.31	2	0.84	0	0.00	7	0.19	12	0.26
Կոտայք	9	0.48	0	0.00	4	0.30	5	0.18	106	31.25	24	25.32	1	0.11	54	4.99	27	0.83
Շիրակ	1 0	0.15	1	0.03	6	0.11	3	0.01	15	6.25	1	5.85	0	0.00	5	0.04	9	0.36
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	8	9.40	2	7.00	0	0.00	3	2.17	3	0.23
Վայոց Ձոր	4	0.01	0	0.00	0	0.00	4	0.01	43	52.63	28	52.21	0	0.00	3	0.11	12	0.31
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	19	10.93	6	10.41	0	0.00	9	0.44	4	0.08
Ընդամենը	3 1	0.98	1	0.03	14	0.73	16	0.22	324	199.92	113	183.49	15	2.20	115	10.84	81	3.37

Հանրապետությունում 2012թ. առաջին եռամսյակում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 1 գործարք /0.15 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2012թ. առաջին եռամսյակում, 2011թ. առաջին եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 56.4%-ով Ընդ որում, Երևանում աճել է 2.4 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 58.5%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 60.5%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 48.9%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 62.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 21.1%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. առաջին եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	11	9.08	37.1	746.0	244.5	111	111.81	365.0	12000.0	4093.8
Ապարան						12	21.90	86.5	2727.3	683.9
Թալին						30	73.20	93.6	5494.5	578.2
Ծաղկահովիտ						8	38.62	79.5	1000.0	235.6
Արարատի մարզ										
Արտաշատ	9	3.10	613.6	2721.3	2310.9	90	26.26	335.1	10833.3	2585.1
Մասիս	4	5.45	67.2	306.0	136.6	51	29.51	200.0	11904.8	2997.8
Վեդի	7	6.63	72.5	873.5	377.3	99	72.02	207.0	10795.1	1701.7
Արմավիրի մարզ										
Արմավիր	4	11.57	63.0	92.0	69.4	129	171.56	294.3	9090.0	1542.1
Բաղրամյան	7	40.00	35.4	837.4	400.5	39	94.18	90.6	2561.1	718.4

Վաղարշապատ						68	61.19	444.4	11764.7	2855.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	6	4.25	66.0	374.5	185.1	60	22.07	199.8	1875.0	389.3
Ճամբարակ						14	7.54	60.5	953.3	332.1
Մարտունի						6	1.69	51.1	2850.0	717.6
Սևան						10	6.97	52.2	2134.8	314.3
Վարդենիս	2	1.78	495.0	495.0	495.0	18	40.28	41.2	2575.1	366.4
Լոռու մարզ										
Ալավերդի						27	13.03	170.4	6424.2	685.7
Գուգարք						23	8.26	234.6	6065.9	773.7
Սպիտակ	1	0.34	685.0	685.0	685.0	9	2.95	250.0	5555.5	724.5
Ստեփանավան	1	0.50	630.0	630.0	630.0	28	25.90	90.6	1686.6	288.4
Տաշիր						106	92.13	45.3	1384.4	136.4
Կոտայքի մարզ										
Աբովյան	13	14.08	42.1	2529.3	694.7	64	17.85	279.3	11942.7	4646.7
Եղվարդ	9	9.24	50.2	1215.5	313.5	138	99.71	174.4	11971.8	2892.8
Հրազդան	2	2.00	390.0	390.0	390.0	38	22.29	130.5	10256.4	1919.9
Շիրակի մարզ										
Ախուրյան						43	41.59	252.0	1693.1	571.8
Ամասիա	1	5.85	124.6	124.6	124.6			40.9	261.0	128.5
Անի						28	34.64	110.6	546.9	372.1
Աշոցք						17	12.34	58.5	215.8	120.5
Արթիկ						17	13.35	79.4	1428.6	370.7
Սյունիքի մարզ										
Գորիս						8	29.99	92.6	1023.2	684.7
Կապան	2	7.00	33.3	494.5	263.9	2	0.66	120.0	841.6	333.0
Մեղրի						3	2.10	193.0	3000.0	720.6
Սիսիան						30	84.21	46.3	1977.4	487.1
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	10	17.65	37.1	241.8	100.8	17	13.97	125.0	10000.0	1865.5
Վայք	18	34.56	76.6	151.4	125.2	10	4.82	58.8	1430.7	600.0
Տավուշի մարզ										
Բերդ						6	2.24	213.3	3783.8	672.5
Իջևան	4	9.35	73.3	761.5	426.9	9	2.24	267.5	9454.5	1225.6
Նոյեմբերյան	2	1.06	361.8	548.2	455.0	25	14.03	46.7	7368.4	831.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. առաջին եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	Նվազագույն	Առավելագույն	Միջին	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						48	58763.0	130.7	22200.0	2572.1
Ապարան	1	2356.0	37.8	37.8	37.8	6	6924.0	124.1	609.6	360.1
Թալին						6	20800.0	63.2	1454.8	152.3
Ծաղկահովիտ								60.0	214.3	86.4

Արարատի մարզ										
Արտաշատ	2	2238.0	819.3	819.6	819.5	28	28095.0	173.9	7140.3	893.6
Մասիս						69	51464.0	187.5	25000.0	1210.3
Վեդի	4	6941.0	44.3	44.3	44.3	34	38594.0	126.1	5000.0	660.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	2	2065.0	554.4	554.4	554.4	57	61480.0	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան						5	5690.0	100.0	833.3	233.1
Վաղարշապատ	2	2000.0	652.0	652.0	652.0	86	91196.0	197.4	26528.4	1528.7
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						21	21793.0	186.6	1084.3	648.9
Ճամբարակ						3	2919.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	3	3600.0	219.8	219.8	219.8	51	70478.0	119.3	5000.0	278.3
Սևան						4	10407.0	240.0	3110.4	300.2
Վարդենիս	1	234.0	1100.0	1100.0	1100.0	2	3967.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի	2	96.0	609.5	610.6	610.1	2	3600.0	114.3	1388.9	215.5
Գուգարք	5	1837.0	224.4	5203.0	2934.9	25	23029.0	77.9	14083.3	1060.8
Սպիտակ						48	63540.0	104.9	1348.3	204.4
Ստեփանավան						7	5961.2	88.2	1666.7	175.4
Տաշիր						1	201.6	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	9	11734.3	264.0	4750.4	2400.5	98	70850.4	264.5	35353.5	1966.0
Եղվարդ	41	33798.0	638.6	6889.8	2704.2	84	69240.4	173.6	27000.0	2842.9
Հրազդան	4	4400.0	233.0	1934.0	974.9	18	20281.0	117.7	34848.5	1319.6
Շիրակի մարզ										
Ախուրյան	5	445.9	2180.3	5237.9	4074.5	24	25951.9	113.6	18750.0	331.1
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի						3	3113.8	67.9	180.6	158.0
Աշոցք								40.8	144.0	63.2
Արթիկ						14	13823.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						3	2419.0	112.2	1700.0	371.6
Կապան	2	1717.0	972.0	1489.5	1230.8	50	35012.0	67.9	2638.9	295.5
Մեղրի	1	20000.0	554.4	554.4	554.4	1	420.0	68.5	632.9	190.0
Սիսիան						2	1590.0	123.5	875.0	195.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	3	1103.0	244.4	755.0	500.0	5	5430.0	96.7	7659.6	498.5
Վայք						2	1420.0	120.7	1448.3	198.8
Տավուշի մարզ										
Բերդ						1	594.0	75.8	810.0	110.3
Իջևան	8	4341.9	243.8	3000.0	2081.3	13	10361.0	74.1	14423.1	519.9
Նոյեմբերյան	1	64.0	1100.0	1100.0	1100.0	2	1380.0	125.0	1948.1	220.0

2012թ. առաջին եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 2 գործարք 0.63 հա մակերեսով, Արագածոտնի մարզում:

2012թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1989 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.2%:

2012թ. առաջին եռամսյակում, 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 6.8%-ով, իսկ 2011թ. առաջին եռամսյակի համեմատ ` 2.1%-ով:

2012թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 123 բնակարանների, 129 անհատական բնակելի տների, 955 հասարակական նշանակության, 179 արտադրական նշանակության օբյեկտների, 522 միավոր /1918.25 հա/ հողերի և 81 ավտոտնակների վարձակալության

գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2012թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 104 վարձակալության գործարքների, այդ թվում 8 միավոր /0.84 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 2.9 անգամ, իսկ 2011թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 3.3 անգամ:

2012թ. առաջին եռամսյակում հանրապետությունում վարձակալված 1918.25 հա հողերից 2.27 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1915.98 հա հողերի 8.88 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 2.25 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արագածոտնի մարզում՝ 511.86 հա, որից 511.59 հա գյուղատնտեսական նշանակության: 2012թ. առաջին եռամսյակում հանրապետության մարզերում վարձակալվել են 1741.90 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2012թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4112 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.8%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 48.2%-ով, իսկ 2011թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 22.7%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /50.7%/, առանձնատների /23.4%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.5%/ և հողերի /9.0%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2194 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 34.5%-ով, իսկ 2011թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 6.4%-ով:

2012թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 856.96 հա հողեր, որից 40.66 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 86.2%-ը, կամ 738.74 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից 0.36 հա՝ Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 311.36 հա, որից 304.18 հա գյուղատնտեսական նշանակության:

2012թ. առաջին եռամսյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 89 գործարքներ, որից 61-ը՝ Երևանում: 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 87.2%-ով, ընդ որում Երևանում՝ 87.2%-ով, մարզերում միասին վերցրած՝ 87.0%-ով, իսկ 2011թ. առաջին եռամսյակի համեմատ նվազել է 81.9%-ով, ընդ որում Երևանում՝ 83.6%-ով, մարզերում միասին վերցրած՝ 76.7%-ով:

2012թ. առաջին եռամսյակում հանրապետությունում ապապետականացման միջոցով մասնավորեցման գործարքներ չեն արձանագրվել:

2012թ. առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 3167 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 73.5%-ով, իսկ 2011թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 40.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 8.4%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /30.9%/:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե